Թիվ ՍՆԴ/1719/04/24 սնանկության գործով պարտապան «ԷԿՈԼԵՆԴ» ՍՊԸ-ի սնանկության գործով գույքերի բաց դասական եղանակով՝ լոտի մեկնարկային գնի հավելմամբ, աճուրդի կազմակերպման և անցկացման մասին

2026-11-03 15:24:13

Հայտատու	Ֆիզիկական անձինք
Տեսակ	Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ
Հիմք	Սնանկության մասին ՀՀ օրենքի 76-րդ հոդված

2026թ. նոյեմբերի 02-ին, ժամը 16:30-ին թիվ ՍՆԴ/1719/04/24 սնանկության գործով սնանկ ճանաչված պարտապան «ԷԿՈԼԵՆԴ» ՍՊԸ-ի սնանկության գործի շրջանակներում կայացած աճուրդի ընթացքում վաճառվել է Լոտ 4 սահմանված անշարժ գույքը։
Թիվ ՍՆԴ/1719/04/24 սնանկության գործով 13.11.2024թ. սնանկ ճանաչված «ԷԿՈԼԵՆԴ» ՍՊԸ-ին պատկանող, «ԷԿՈԼԵՆԴ» ՍՊԸ-ի կողմից «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի /իրավահաջորդն է `«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն/ առջև ստանձնած դրամական պարտավորությունների կատարման ապահովման դիմաց գրավադրված թվով 3 /երեք/ անշարժ գույքերի 2026թ. նոյեմբերի 02-ին, ժամը՝ 16:30-ին, նշանակված աճուրդը չի կայացել՝ հայտեր չլինելու պատճառով:
2026թ. նոյեմբերի 19-ին, ժամը 16:30-ին, թիվ ՍՆԴ/1719/04/24 սնանկության գործով սնանկ ճանաչված պարտապան «ԷԿՈԼԵՆԴ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 03548286, գրանցման համարը՝ 42.110.1042512, տրված ՝ 23.10.2018թ., հասցե՝ ք.Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Բաբաջանյան փողոց, 73 շ., բն.9) սնանկության գործով կառավարիչ Ա. Մաթևոսյանի կողմից ք. Երևան, Հանրապետության փողոց, 67 շենք, թիվ 57 գրասենյակային տարածք հասցեում կանցկացվի ՀՀ սնանկության դատարանի 13.11.2024թ.-ի թիվ ՍՆԴ/1719/04/24 վճռով սնանկ ճանաչված պարտապան «ԷԿՈԼԵՆԴ» ՍՊԸ-ի Դատարանի կողմից հաստատված պարտատերերի պահանջների բավարարման նպատակով, «ԷԿՈԼԵՆԴ» ՍՊԸ-ին պատկանող, «ԷԿՈԼԵՆԴ» ՍՊԸ-ի կողմից «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի /իրավահաջորդն է `«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն/ առջև ստանձնած դրամական պարտավորությունների կատարման ապահովման դիմաց գրավադրված թվով 3 /երեք/ անշարժ գույքերի, աճուրդային վաճառքը՝ ներկայացված 3 /երեք/ լոտով՝ ըստ կցված էլեկտրոնային ֆայլում ներկայացված հաջորդականության և մեկնարկային գնի:
Յուրաքանչյուր չկայացած աճուրդից հետո, հաջորդ աճուրդին՝ կրկնաճուրդին,

անշարժ գույքերի մեկնարկային գինը /արժեքը/ նվազեցվելու է լոտի արժեքի /գնի/ նախորդ աճուրդի մեկնարկային գնից 10 /տասը/ տոկոսի չափով :
Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք, աճուրդի հայտարարությամբ սահմանված ժամկետում՝ բայց ոչ ուշ, քան աճուրդի անցկացման օրվանից հինգ աշխատանքային օր առաջ, կարող են աճուրդի մասնակցության հայտ (այսուհետ՝ հայտ) ներկայացնել ՀՀ սնանկության դատարանի գրասենյակ /հասցե՝ ք. Երևան, Օտյան 53/2/՝ հայտը գրասենյակի միջոցով կառավարչին փոխանցելու (տրամադրելու) համար:
Աճուրդի մասնակցության վճարի և նախավճարի վճարումը կատարվում է անկանխիկ եղանակով՝ «ԷԿՈԼԵՆԴ» ՍՊԸ-ի անվամբ «Արդշինբանկ» ԲԲԸ-ում բացված թիվ 2474403108910000 սնանկության հատուկ հաշվին՝ մինչև հայտ և/կամ ծանուցում ներկայացնելու պահը: Աճուրդն անցկացվում է բաց դասական եղանակով, աճուրդի հաղթող է ճանաչվում ամենաբարձր գինն առաջարկած մասնակիցը:
Աճուրդը կազմակերպվելու և անցկացվելու է ՀՀ արդարադատության նախարարի 16.03.2020թ.-ի «Պարտապանին պատկանող գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու կարգը սահմանելու մասին» N 116-Ն հրամանի համաձայն՝ հրամանով սահմանված կարգով՝ ներառյալ ՀՀ արդարադատության նախարարի 16 հունիսի 2025թ. թիվ 374-Ն հրամանով ՀՀ արդարադատության նախարարի 16.03.2020թ.-ի հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին հրամանով սահմանված կարգավորումների:
Նշված իրավական ակտը հանդիսանում է աճուրդի կանոնակարգը:
Աճուրդի մասնակցության ցանկություն ունեցող անձինք՝ հայտատուները, պետք է աճուրդի հետ կապված հարաբերություններում /գործընթացում/ առաջնորդվեն և ղեկավարվեն ՀՀ արդարադատության նախարարի 16.03.2020թ.-ի «Պարտապանին պատկանող գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու կարգը սահմանելու մասին» N 116-Ն հրամանով, այդ թվում՝ ՀՀ արդարադատության նախարարի 16 հունիսի 2025թ. թիվ 374-Ն հրամանով ՀՀ արդարադատության նախարարի 16.03.2020թ.-ի հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին հրամանով սահմանված կարգավորումներով:
Հայտի ձևը և աճուրդի կանոնակարգը անվճար կարող եք ստանալ սնանկության գործով կառավարչից՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 09:00-ից 18:00-ն՝ ք. Երևան, Հանրապետության փ. 67շ., թիվ 57 գրաս. տարածք հասցեով կամ սնանկության գործով կառավարչին տրամադրել էլեկտրոնային փոստի հասցե, որին կուղարկվի հայտը: Էլեկտրոնային հաղորդագրության ձևաչափը նախընտրելի է: Լոտը կարող է ուսումնասիրվել ցանկացած աշխատանքային օր 09:00-ից 18:00-ն ընկած ժամանակահատվածում՝ նախապես պայմանավորվածություն ձեռք բերելով սնանկության գործով կառավարչի հետ:
Լոտը ուսումնասիրելու և աճուրդին առնչվող այլ հարցերով դիմել սնանկության

գործով կառավարիչ Արմեն Մաթևոսյանին՝+374 96 224 228 հեռախոսահամարով կամ հաղորդագրությունը ուղարկել armen.matevosyan@lawconsult.am էլեկտրոնային փոստի հասցեին կամ այցելել ՀՀ, ք. Երևան, Հանրապետության փողոց, 67 շենք, թիվ 57 գրասենյակային տարածք հասցեով:

121-1. Լոտերի նկարագրություն.pdf

121-2. Աճուրդի անցկացման և հայտերի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն.pdf

37441224254

armen.matevosyan@lawconsult.am

-